ԿԱՐԾԻՔ

Դավիթ Հակոբի Ջիլֆիմյանի՝ «Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների քրեաիրավական և քրեակատարողական բնութագիրը» վերտառությամբ, ԺԲ.00.05 «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ժամանակակից պայմաններում ընթացող արմատական փոփոխությունները բազմաթիվ հակասական գործընթացներ են ծնել հասարակական կյանքի տարբեր բնագավառներում, որոնց պայմաններում առավել քան երբևէ կարևորվում են իրավական պետության կայացման, երկրում օրինականության և իրավակարգի կայունացման, քաղաքացիների սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանության և երաշխավորման, անձի և պետության միջև փոխադարձ պատասխանատվության խնդիրները:

Հասարակության մեջ ընթացող՝ հաճախ ճգնաժամային բնույթ կրող բացասական գործընթացները հանգեցնում են մի իրավիճակի, որ քաղաքացիների մեծ մասի գիտակցության մեջ էականորեն «նոսրանում» է թույլատրելի և անթույլատրելի, իրավաչափ և ոչ իրավաչափ վարքագծերի միջև գոյություն ունեցող սահմանը, ինչն էլ իր հերթին նպաստում է իրավախախտումների և հատկապես հանցագործությունների որակական փոփոխմանն ու դրանց սոցիալական բազայի ընդլայնմանը:

Հանցավորության աճին նպաստող պատճառներն ու պայմանները բազմազան են: Մարդկային հասարակության մշտական ուղեկից այս երևույթի «ծաղկմանը» հատկապես նպաստում են տնտեսական հարաբերությունների անկանոն զարգացումն ու դրա հետևանքով հասարակության անհամաչափ բաժանումը սոցիալական տարբեր խմբերի ու խավերի, գործազրկությունը, իրավագիտակցության, իրավական ու բարոյական դաստիարակության ոչ բավարար մակարդակը, օրենսդրության անկատարությունը, սոցիալ-տնտեսական պայմանները և այլն:

Հանցավորությունն այսօր նոր հատկանիշներ և բնորոշ գծեր է ձեռք բերել. այն դարձել է առավել պրոֆեսիոնալ, հաճախ դաժան, կազմակերպված ու համախմբված՝

կլանելով հասարակության նոր շերտեր, իր «ճիրանները» ներքաշելով գործունեության տարբեր ոլորտների ներկայացուցիչների՝ այդ թվում անձանց ում առաքելությունն է հանցավորության դեմ պայքարը:

Առավել մտահոգիչ են ոչ այնքան հանցավորության շարունակական աճի մասին վկայող քանակական ցուցանիշները, որքան այդ երևույթի մշտապես կատարելագործվող որակական փոփոխությունները: Եվ այսօր առավել քան հասունացել է որակապես ու քանակապես փոփոխված հանցավորության դեմ պայքարի դժվարին գործում, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման արդյունքներով, արդյունավետ մեխանիզմների ու միջոցառումների մշակման անհրաժեշտությունը:

Հանցավորության դեմ պայքարի, դրա վիճակի ու դինամիկայի նկատմամբ վերահսկողության գործուն միջոց է հանդիսանում քրեակատարողական օրենդրությունը, որի զարգացման ու կիրառման հիմնախնդիրների համակողմանի ուսումնասիրությունն ու վերլուծությունը էապես կարևորվում են:

Այս առումով Դավիթ Հակոբի Ջիլֆիմյանի՝ «Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների քրեաիրավական և քրեակատարողական բնութագիրը» վերտառությամբ ատենախոսության արդիականությունը կասկած չի հարուցում:

Գիտական հետազոտություն կատարելիս ատենախոսն իր առջև նպատակ է դրել ուսումնասիրել իրավապահ մարմինների նախկին աշխատակից «դատապարտյալ անձի» հիմնահարցը քրեակատարողական իրավունքի տեսության ու օրենսդրության մեջ, վերլուծել դասակարգման այդ խմբի հանցավոր անձանց քրեաիրավական, կրիմինալոգիական և քրեակատարողական բնութագրերը, ինչպես նաև իրավական վիճակի առանձնահատկությունները:

Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակին հաջողվել է համակողմանի հետազոտության ենթարկել իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների վերաբերյալ գրեթե բոլոր խնդրահարույց հարցերը՝ ատենախոսության նպատակով կանխորոշված հետազոտական խնդիրների շրջանակում: Մասնավորապես՝ հետազոտության շրջանակում հեղինակը բացահայտել է իրավապահ մարմինների նախկին աշխատակից «դատապարտյալի անձ»

հասկացության իրավաբանական իմաստն ու մշակել դրա քրեակատարողական հասկացությունը, կրիմինալոգիական բնութագիրը, սոցիալ-ժողովրդագրական բնութագրի առանձնահատկություններն ու քրեաիրավական բնութագրի առանձին և էական տարրերը, իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների նկատմամբ կարգապահական ներգործության և վերասոցիալականացման հիմնահարցերը, սոցիալական միջավայրն ազատազրկման վայրերում, ինչպես նաև այս կատեգորիայի դատապարտյալների արտաքին սոցիալական կապերը՝ վեր հանելով դրանց բնորոշ առանձնահատկությունները:

Ուսումնասիրության արդյունքներով հեղինակի կողմից ներկայացվել են փաստարկված տեսական եզրահանգումներ և օրենսդրական առաջարկություններ:

Հարկ է նաև նշել, որ ատենախոսությունն ունի հարուստ տեսական և էմպիրիկ հիմք: Ատենախոսության հեղինակին հաջողվել է գիտական պատշաճ մակարդակով համալիր և ամբողջական հետազոտություն իրականացնել: Դրան նպաստել է հատկապես այն հանգամանքը, որ հեղինակն օգտվել է թեմային առնչվող հայրենական և արտասահմանյան աղբյուրներից, ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերից, ինչպես նաև վերլուծության է ենթարկել հիմնախնդրին առնչվող մի շարք վերաբերելի միջազգային փաստաթղթեր: Բացի այդ, ուսումնասիրության էմպիրիկ հիմքն են կազմում վիճակագրական տվյալները, դատապարտյալների և քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցումները, որոնք հեղինակի կողմից իրականացվել են 2019 թվականին՝ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի 100 դատապարտյալների և 30 աշխատակիցների շրջանում, և որոնց արդյունքները մշակվել և օգտագործվել են հետազոտության ընթացքում: Աշխատանքը շարադրելիս օգտագործվել են նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի՝ քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարին նվիրված արտահերթ հրապարակային զեկույցի նյութերը, Հայաստանի վիճակագրական տարեգրքի իրավական վիճակագրության նյութերը, ՀՀ և ՌԴ քրեական պատիժները կատարող մարմինների պաշտոնական կայքէջերի վիճակագրական նյութերը:

Դ.Զիլֆիմյանի ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ներառում են տասներկու պարագրաֆներ, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և երկու հավելվածներից:

Ատենախոսության սեղմագիրը և հրապարակված հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթներն ու չեն հակասում դրան:

Այս ամենով հանդերձ, ներկայացված թեկնածուական աշխատանքում առկա են որոշ վիճելի դիրքորոշումներ ու դրույթներ, որոնք, ընդհանուր առմամբ չազդելով աշխատանքի դրական գնահատականի վրա, լրացուցիչ հիմնավորման կարիք ունեն: Այսպես.

1. Պաշտպանության ներկայացվող 4-րդ դրույթում ատենախոսության հեղինակը, փաստարկված առաջարկ ներկայացնելով որպես քրեակատարողական օրենսդրության սկզբունք ճանաչել դատապարտյալների անվտանգությունն ու համապատասխան լրացում կատարել ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 5-րդ հոդվածում, միաժամանակ առաջարկել է լրացնել նաև նույն օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասը՝ որպես քրեակատարողական օրենսդրության խնդիր, ի թիվս այլոց, նախատեսելով դատապարտյալի անվտանգության ապահովումը: Հիշատկված դրույթում օրենսդրի կողմից որպես քրեակատարողական օրենսդրության խնդիր նախատեսված՝ դատապարտյալի իրավունքների և ազատությունների պաշտպանության պահանջն ինքնին բավական ընդգրկուն է ու ենթադրում է նաև դատապարտյալի անվտանգության ապահովման երաշխիքը, ուստի այն որպես քրեակատարողական օրենսդրության առանձին խնդիր նախատեսելու իրավական անհրաժեշտությունը բացակայում է:

2. Պաշտպանության ներկայացվող 7-րդ դրույթի շրջանակներում ատենախոսը վկայակոչել և վերլուծել է ազատազրկման դատապարտված իրավապահ մարմինների նախկին աշխատակիցների նախկինում դատապարտված լինելու, ինչպես նաև այդ խմբի ածանց տարիքային առանձնահատկությունների վերաբերյալ վիճակագրական տվյալները՝ այդ կապակցությամբ հայտնելով սեփական մտահոգությունը, որի գիտական նորույթն ու գիտական արժեքը, լրացուցիչ փաստարկման և հիմնավորման կարիք ունեն: Հեղինակի հիշյալ հետևությունը կարող էր ներառվել ատենախոսության

«Եզրակացություն» բաժնում, որտեղ ատենախոսը ներկայացրել է իր եզրահանգումներն ու առաջարկությունները:

3. Փաստելով, որ ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց համար պատժի անջատ կրումը և իրավունք է, և պարտականություն, հեղինակն առաջարկում է ՀՀ քրեակատարողական օրենսգրքում նախատեսել առանձին հոդված, որի կարգավորման առարկան կլինի դատապարտյալի անձնական անվտանգության իրավունքը, որի պայմաններում նպատակահարմար կլիներ, որ ատենախոսը ներկայացներ նման դրույթի օրենսդրական ձևակերպման իր տարբերակը, ինչը հնարավորություն կտար առավել համոզիչ դարձնելու օրենսդրական լրացում կատարելու անհրաժեշտության վերաբերյալ առաջարկը:

4. Լրացուցիչ հիմնավորման կարիք ունի նաև եզրակացության 6-րդ կետը, որտեղ հեղինակը ցածր աշխատավարձը դիտարկում է իբրև քրեածին գործոն՝ իրավապահ մարմինների աշխատակիցների որոշակի տարիքային խմբի ներկայացուցիչների համար:

Հարկ է միաժամանակ փաստել, որ ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ, այդպիսիք չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Գտնում եմ, որ գրախոսվող աշխատանքն իրենից ներկայացնում է ինքնուրույն, ամբողջական, համալիր և ավարտուն հետազոտություն, որում հեղինակին հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրներն ու կատարված հետազոտության արդյունքում ներկայացնել ինքնուրույն առաջարկություններ, որի մասին են վկայում պաշտպանության ներկայացվող դրույթներում և աշխատանքի եզրափակիչ մասում շարադրված հետևությունները: Կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա ատենախոսի կողմից մշակված օրենսդրական առաջարկությունները կարող են օգտագործվել քրեակատարողական օրենսդրության կատարելագործման նպատակով:

Վերը նշվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Դավիթ Հակոբի Զիլֆիմյանի՝ «Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների

քրեաիրավական և քրեակատարողական բնութագիրը» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից թեկնածուական աշխատանքներին ներկայացվող պահանջներին ու սահմանված չափորոշիչներին, իսկ դրա հեղինակն արժանի է ԺԲ.00.05 «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Լ.Զ.Թադևոսյան

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ.Զ.Թադևոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի ղեկավարի
ժամանակավոր պաշտոնակատար՝

Վ.Մ.Միքաելյան